# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## ՈՐՈՇՈՒՄ

<< 13 >> նոյեմբերի 2012թ.   N 286

ք. Արմավիր

**_ԽԱՉԻԿ ՖԻՐԴՈՒՍԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ, ՌԱՅԱ ՍՈՒՐԵՆԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ, ՍԵՐՅՈԺԱ ՖԻՐԴՈՒՍԻԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՖԻՐԴՈՒՍԻ ՔԵԽՎԱՅԱՆՑԻՆ, ՍԱԹԻԿ ՀՈՎՆԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ՍԱԹԵՆԻԿ ԱՐՄԵՆԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ, ՌԱԻՍԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ, ԱԼԻՍԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՖԻ ԽԱՉԻԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ_**

Ղեկավարվելով <<Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N251-Ա որոշումը, Խաչիկ Շահբազյանի և Մեծամորի քաղաքապետարանի <<Մեծամորի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի միջև 2012 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված բնակարանի վարձակալության մասին պայմանագիրը և Խաչիկ Ֆիրդուսի Շահբազյանի 2012 թվականի նոյեմբերի 6-ի դիմումը.

***որոշում եմ՝***

1. Խաչիկ Ֆիրդուսի Շահբազյանին, Ռայա Սուրենի Շահբազյանին, Սերյոժա Ֆիրդուսիի Շահբազյանին, Գայանե Ֆիրդուսի Քեխվայանցին, Սաթիկ Հովնանի Ասլանյանին, Սաթենիկ Արմենի Շահբազյանին, Ռաիսա Սերյոժայի Շահբազյանին, Ալիսա Սերյոժայի Շահբազյանին և Սոֆի Խաչիկ Շահբազյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N251-Ա որոշմամբ վարձակալական հիմունքներով հատկացված Մեծամոր քաղաքի թիվ 26 շենքի թիվ 202 երկուսենյականոց բնակարանը՝ 48.2 քմ ընդհանուր մակերեսով, 28.0 քմ բնակելի մակերեսով անհատույց մասնավորեցնել՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝***   ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***